Հաստատված է
<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>>ԲԲԸ Վարչության
18.03. 2021թ. թիվ 48/01-180321 որոշմամբ
Ուժի մեջ է մտել՝ 22.03.2021թ.

Հրապարակման ամսաթիվ՝ 22.03.2021թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել
մանրամասների համար՝ Հեռախոս - (37410)8686,
(37410)51-09-10 (9104) - Զանգերի կենտրոն

<<ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՀԱՏԵՂԻ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԻ Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆՄԱՆ>> ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2021

Անվանումը - «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, այսուհետ՝ Բանկ:
Հասցե - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1
Էլեկտրոնային հասցե - bank@aeb.am
Կայք - www.aeb.am
Հեռախոս - (37410)8686, (37410)510-910 (9104)

Ֆաքս - (37410)53-89-04

1. Անհատական պահատեղի օգտագործման պայմանները.

1) Հաճախորդը, Պահատեղի վարձակալման ժամանակահատվածում, Բանկի գործառնական օրվա ընթացքում մուտքի իրավունք ունի դեպի անհատական պահատեղի տեղակայման սենյակ՝ համաձայն Բանկում գործող կարգի, ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթը:
2) Հաճախորդը անհատական պահատեղի տեղակայման սենյակում կարող է գտնվել առավելագույնը 10 րոպե:
3) Հաճախորդը Արժեքները տեղադրում է Պահատեղի ներսում դրված արկղի մեջ:
4) Արգելվում է պահատեղում պահել պայթուցիկ, դյուրավառ, քիմիական, կենսաբանական, ռադիոակտիվ վտանգ ներկայացնող, ինչպես նաև հեղուկ նյութեր, թմրանյութեր, զենք, զինամթերք:
5) Բանկը կասկածի դեպքում (ահաբեկչություն, թմրանյութեր) իրավասու է պահանջել պահատեղի ստուգում, բացառիկ դեպքում նաև առանց հաճախորդի մասնակցության:
6) Հաճախորդի ցանկությամբ, Պահատեղի արկղը կարող է կնքվել Հաճախորդի ստորագրությամբ կամ կնիքով:
7) Հաճախորդը պարտավորվում է թույլ չտալ բանալու կրկնօրինակի պատրաստում, անմիջապես գրավոր տեղեկացնելով Բանկին՝ Պահատեղի բանալու կորստի մասին:
8) Հաճախորդի դիմումի հիման վրա նրան տրամադրվում է բանալու կրկնօրինակը՝ նրանից գանձելով Բանկի վարչության կողմից տվյալ ծառայության համար սահմանված սակագինը:
9) Պահատեղի վարձակալության Պայմանագրի ժամկետի ավարտման օրը՝ մինչև ժամը 16:00, կամ, եթե այդ օրը ոչ աշխատանքային է՝ ապա հաջորդող աշխատանքային օրը՝ մինչև ժամը 12:00, Հաճախորդը պարտավորվում է ազատել Պահատեղը և հանձնել բանալին:
10) Բանկը պատասխանատվություն չի կրում Պահատեղում տեղադրված կամ Պահատեղում տեղադրելու կամ Պահատեղից դուրս բերելու ընթացքում Արժեքների կորստի կամ վնասման համար, եթե այդպիսի կորուստը կամ վնասը չի առաջացել Բանկի աշխատակիցների մեղքով:
11) Պահատեղի օգտագործման ժամկետը լրանալուց հետո Հաճախորդի և բանկի կողմից ժամկետը չերկարաձգվելու և Պահատեղը չազատվելու դեպքում հաշվարկվում է Հաճախորդի նկատմամբ տուգանք յուրաքանչյուր ուշացրած օրվա համար՝ բանկի սակագներով սահմանված չափով:
12) Բանկը կարող է արգելել Հաճախորդին օգտվելու պահատեղից, եթե Հաճախորդը ունի բանկի նկատմամբ չվճարված պարտավորություններ:
13) Պահատեղի օգտագործման ժամկետը լրանալու պահից 180 օրվա ընթացքում պահատեղը չազատելու դեպքում Բանկի գործադիր տնօրենի հրամանով Բանկի աշխատակիցներից կազմվում է հանձնաժողով, որը բացում է Պահատեղը, հանում է պարունակությունը և կազմում է համապատասխան ակտ: Հաճախորդի չվճարված պարտավորությունների մարման նպատակով պահատեղում գտնվող գույքը Բանկը կարող է վաճառել հրապարակային սակարկություններով և բավարարել իր պահանջը դրա հաշվին: Մինչև գույքի վաճառքը այն պահվում է Բանկի զետեղարանում և տուգանքների հաշվարկը շարունակում է գործել:

2. Անհատական պահատեղեր վարձակալելու համար ներկայացվող փաստաթղթերը.

Ֆիզիկական անձի դեպքում.

- Անձը հաստատող փաստաթուղթ,
- Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ (չունենալու դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք): Այս փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը ստացել է այն էլեկտրոնային տարբերակով՝ տեղեկատվական շտեմարաններից):

Իրավաբանական անձի դեպքում.

- Եթե Բանկում ունեն հաշիվ, ապա կազմակերպությունը ներկայացնող անձի անունով պահատեղից օգտվելու լիազորագիր,
- Եթե Բանկում չունեն հաշիվ, ապա Բանկում բանկային հաշվի բացման համար պահանջվող փաստաթղթերը (լիազորագիրը նոտարով հաստատված):

Ելնելով տարաբնույթ հանգամանքներից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Սույն Ամփոփագրի իմաստով
անձը հաստատող փաստաթուղթ է՝

- ՀՀ քաղաքացիների համար անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական գրքույկ՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, վերադարձի վկայական՝ միայն ՀՀ վերադառնալու համար, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ կամ ժամանակավոր վկայական, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիր, ծննդյան վկայական,
- ապաստան հայցողի համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայական, փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ,
- օտարերկրյա քաղաքացիների համար՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (միջազգայնորեն ճանաչված), ինչպես նաև ՀՀ-ում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթեր՝ մշտական կացության քարտ, ժամանակավոր կացության քարտ, ՀՀ հատուկ անձնագիր,
- քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթ, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական, ՀՀ-ում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթեր՝ մշտական կացության քարտ, ժամանակավոր կացության քարտ, ՀՀ հատուկ անձնագիր,
- ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար՝ ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական):

Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ է՝

- սոցիալական քարտ կամ
- ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ կամ
- հանրային ծառայությունների համարանիշը պարունակող օտարերկրյա քաղաքացու՝ ՀՀ կացության քարտ (առկայության դեպքում) կամ
- հանրային ծառայությունների համարանիշը պարունակող ՀՀ-ում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի ինքնությունը հավաստող փաստաթղթեր կամ
- հանրային ծառայությունների համարանիշը պարունակող տեղեկանք:

3. *Անհատական պահատեղի ընդհանուր սակագներ*

Ժամկետ	**Չափսեր**		
	Փոքր	Միջին	Մեծ
	43սմx27սմx7.5սմ	43սմx27սմx16սմ	43սմx55սմx16սմ
ա/ 7 օր	10 000 դրամ	15 000 դրամ	20 000 դրամ
բ/ 14 օր	15 000 դրամ	20 000 դրամ	25 000 դրամ
գ/ 1 ամիս	20 000 դրամ	25 000 դրամ	30 000 դրամ
դ/ 3 ամիս	35 000 դրամ	40 000 դրամ	45 000 դրամ
ե/ 6 ամիս	45 000 դրամ	50 000 դրամ	55 000 դրամ
զ/ 9 ամիս	50 000 դրամ	55 000 դրամ	60 000 դրամ
է/ 12 ամիս	55 000 դրամ	60 000 դրամ	65 000 դրամ
ը/ 12 ամսից ավել	12 ամսվա համար սահմանված սակագնին գումարած 12 ամիսը գերազանցող ժամկետին համապատասխան սակագինը		
Անհատական պահատեղի կորցրած բանալու փոխարինում	30 000 դրամ		

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻՑ ՀԵՏՈ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՕՐՎԱ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՎՃԱՐՆԵՐԸ.

- մինչև 7 օր օգտագործելու դեպքում՝ օրական 2500 ՀՀ դրամ
- 8 օրից մինչև 14 օր օգտագործելու դեպքում՝ օրական 1700 ՀՀ դրամ
- 15 օրից մինչև 30 օր օգտագործելու դեպքում՝ օրական 1000 ՀՀ դրամ
- 31 օր և ավել օգտագործելու դեպքում՝ օրական 500 ՀՀ դրամ

4. *«ՆԱՆՈ» ՍԱՄՆԱԾՅՈՒՂ-ի անհատական պահատեղի սակագները.*

Ժամկետ	**Չափսեր**	
	Փոքր	Միջին
	6սմx30սմx40սմ	15սմx30սմx40սմ
7 օր	2 500 ՀՀ դրամ	3 500 ՀՀ դրամ
14 օր	4 500 ՀՀ դրամ	7 000 ՀՀ դրամ
1 ամիս	7 000 ՀՀ դրամ	9 000 ՀՀ դրամ
3 ամիս	10 000 ՀՀ դրամ	18 000 ՀՀ դրամ
6 ամիս	15 000 ՀՀ դրամ	25 000 ՀՀ դրամ
9 ամիս	20 000 ՀՀ դրամ	30 000 ՀՀ դրամ
12 ամիս	25 000 ՀՀ դրամ	35 000 ՀՀ դրամ
12 ամիս և ավել	12 ամսվա համար սահմանված սակագնին գումարած 12	

	ամիսը գերազանցող ժամկետին համապատասխան սակագինը
Հաճախորդի կողմից կորցրած կամ վնասված բանալու պատրաստման համար ապահովման դեպոզիտ	10 000 ՀՀ դրամ

- **«ՆԱՆՈ» ՄԱՄՆԱՃՅՈՒՂ-ում պայմանագրի ժամկետից հետո փաստացի օգտագործված յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տուգանք 1 200 ՀՀ դրամ գումարի չափով:**
- «ՆԱՆՈ» ՄԱՄՆԱՃՅՈՒՂ-ում պահատուփից յուրաքանչյուր անգամ օգտվելու դեպքում սահմանվում է 500 ՀՀ դրամ:

5. *Արժեքների ի պահ ընդունում.*

Բանկի ՀՍԿԳ/մասնաճյուղերը կարող են իրենց հաճախորդներից ի պահ ընդունել տարբեր տեսակի արժեքներ: Բանկին ի պահ հանձնվող արժեքները հաճախորդի ներկայությամբ փաթեթավորվում և կնքվում են: Փաթեթի /պարկի/ մեջ տեղադրվում է նաև ի պահ ընդունվող արժեքների ցուցակը /Պահատվության պայմանագրին կից/: Հաճախորդը կարող է ցանկացած ժամանակ ստուգել արժեքների պահպանվածությունը և վիճակը այդ մասին Պահառուին առնվազն 24 ժամ առաջ զգուշացնելուց հետո: Պահատվության պայմանագրով սահմանված ժամկետից շուտ արժեքները հետ վերցնելու դեպքում պահատվության վճարը չի վերադարձվում: Պահատվության ժամկետն ավարտվելուց հետո արժեքները հետ չվերցնելու դեպքում հաշվարկվում է տույժ յուրաքանչյուր ուշացած օրվա համար Բանկի սակագներով սահմանված չափով և կարգով: Պահատվության ժամկետն ավարտվելուց հետո Բանկի կողմից հաճախորդին կատարված ծանուցումից 30 օրվա ընթացքում արժեքները հաճախորդի կողմից հետ չվերցնելու դեպքում իրացվում է արժեքը հրապարակային սակարկություններով և դրա հաշվին բավարարվում է Բանկի պահանջը:

Արժեքների ի պահ ընդունման սակագներ*[1]

1 ամիս	2 ամիս	3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս
10 000 դրամ	15 000 դրամ	20 000 դրամ	25 000 դրամ	30 000 դրամ	35 000 դրամ

Սակագինը ներառում է ԱԱՀ-ն:

1. Պայմանագրի ժամկետից հետո փաստացի օգտագործված յուրաքանչյուր օրվա համար՝ 500 ՀՀ դրամ:

6. *Այլ դրույթներ.*

1) Այլ անձանց կողմից անհատական պահատեղից օգտվելու լիազորություններն ընդունվում են եթե.
   - լիազորագությունը տրվել է նոտարով վավերացված գրավոր լիազորագրով, կամ
   - լիազորությունը տրվել է Բանկում/մասնաճյուղում անձամբ պահատեղը վարձակալած անձի կողմից՝ Բանկի պատասխանատու աշխատակցի ներկայությամբ և ՀՍԿԳ պետի/մասնաճյուղի կառավարչի հաստատումով ստորագրված գրավոր լիազորագրով:
2) հաճախորդը կարող է օգտվել անհատական պահատեղերից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գլխավոր գրասենյակում, «ԿԵՆՏՐՈՆ», «ՇԱՀՈՒՄՅԱՆ», «ԷՋՄԻԱԾԻՆ» և «ՆԱՆՈ» մասնաճյուղերում:

«ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՁԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»: